Սկսի՛ր վերամշակել

Դասապլան

Ներածություն

Քանի որ աշակերտներն այժմ ծանոթ են կրճատման, վերօգտագործման, հրաժարվելու, վերամշակման ու վերականգնման հայեցակարգերին, ժամանակն է, որ նրանք սովորեն նյութերի տարբերության մասին: Կարևոր է նաև իմանալ, թե որ իրերը կարելի է վերամշակել, իսկ որոնք՝ ոչ:

Էկո-Դպրոցներ ծրագրի քայլերը. ուսումնական պլանների փոխկապակցում:
Ուսումնական պլանների փոխկապակցում. բնապահպանություն:

Նպատակներ

Աշակերտները կկարողանան. հասկանալ, թե ինչպես են ամենօրյա օգտագործման որոշ իրեր երկար ժամանակ մնում բնության մեջ:

Պահանջվող ժամանակ/ տևողություն

Դասարանային աշխատանք 1. 40 րոպե (10 րոպե հիմնական տեղեկատվության և խաղի կանոնների ներկայացման համար, 30 րոպե խաղավարության համար):

Անհրաժեշտ ռեսուրսներ՝

- Վերամշակման ենթակա 20 իրի ցանկ և ցանկում նշված բոլոր իրերը,
- 20 չվերամշակվող իրի ցանկ և ցանկում նշված բոլոր իրերը,
- յուրաքանչյուր երեխայի համար 2 փոքր տուփ,
- գրիչ/ մատիտ,
- ռեսուրս 1. չվերամշակվող նյութ,
- ռեսուրս 2. վերամշակվող նյութ,
- (5X5 թերթիկ):

Eco-Schools

7-8 Տարեկան

4 QUALITY EDUCATION

Գործողություններ

Դասարանային աշխատանք 1

- Պատրաստել առօրյա օգտագործման 20 վերամշակելի և 20 չվերամշակվող իրերի ցանկ: (Խորհուրդ. ավելի հասկանալի և պատկերավոր լինելու համար ներառել այն իրերը, որոնց հետ աշակերտներն ունեն առօրյա առնչություն),
- Ներկայացնել իրերը 5X5 թերթիկի վրա,
- Կազմել յուրաքանչյուր ցանկի պատահական տարբերակները և բաժանել այն աշակերտներին,
- Բարձրաձայն ընթերցել պատահական իրի անվանում, յուրաքանչյուր դեպքում մեկական իր: Հերթականությունն ինքնակամ կլինի: Աշակերտներին հանձնարարել իրենց ցանկից ջնջել այդ առարկան, և նշել Վ վերամշակվող առարկայի դեպքում և ՉՎ՝ չվերամշակվողի,
- Այն մասնակիցը, ով կնշի 5 տող (ուղղահայաց, հորիզոնական կամ անկյունագծային կարող է կիսվել իր ցանկով՝ բացատրելով ցանկում նշված որևէ առարկայի ընտրությունը,
- Ավելին, բոլոր աշակերտներին խրախուսվում է վարժության վերաբերյալ կարծիք արտահայտել:
- Հանձնարարություն.
  - Ո՞ր ապրանքներն են վերամշակվող և չվերամշակվող,
  - Որո՞նք են յուրաքանչյուր դասին պատկանող ամենատարածված ապրանքները,
  - Որտե՞ղ կարելի է պահել վերամշակվող ապրանքները,
  - Հանձնարարել աշակերտներին հավաքել տեղեկություն այն մասին, թե որտեղ են հայտնվում չվերամշակվող ապրանքները:

Ռեսուրս

Ռեսուրս 1. վերամշակվող առարկաների ցանկ

Սոդայի տարա	Ջրի պլաստիկ շիշ	Թերթ	Հացահատիկի տուփ	Պլաստիկ ծաղկաման
Ապակե շիշ	Մածունի աման	Ամսագիր	Բամբակե շապիկ	Պողպատե գդալ
Պլաստիկ ձող	Ստվարաթղթե տուփ	Աման լվալու հեղուկի շիշ	Թիթեղյա տարա	Կաթի պլաստիկ տարա

Ռեսուրս 2. չվերամշակվող առարկաների ցանկ

Պիցցայի կեղտոտ տուփ	Կեղտոտ սպունգ	Օգտագործված սուրճի թղթե բաժակ	Կերամիկական բաժակ	Բժշկական ասեղ
Մեկանգամյա օգտագործման ափսե (PS)	Քիմիական տարա	Բժշկական ձեռնոց	Մարկեր	Հայելի
Լամպ	Օգտագործված անձեռոցիկ	Լուսանկար	Չիպսի տոպրակ	Սոսնձված ձող

Ռեսուրս 3. 5 X 3 թերթիկ

Պիցցայի կեղտոտ տուփ՝ չվերամշակվող	Սոդայի տարա՝ վերամշակվող	Բժշկական ձեռնոց՝ չվերամշակվող	Աման լվալու հեղուկի շիշ՝ վերամշակվող	Ստվարաթղթե տուփ՝ վերամշակվող
Պլաստիկ ձող՝ վերամշակվող	Թերթ՝ վերամշակվող	Մածունի աման՝ վերամշակվող	Հայելի՝ չվերամշակվող	Օգտագործված անձեռոցիկ՝ չվերամշակվող
Մարկեր՝ չվերամշակվող	Օգտագործված սուրճի թղթե բաժակ՝ չվերամշակվող	Կաթի պլաստիկ տարա՝ վերամշակվող	Լուսանկար՝ չվերամշակվող	Բամբակե շապիկ՝ վերամշակվող

* Այն իրերը, որոնք հնարավոր է/ հնարավոր չէ վերամշակել, կարող են տարբերվել՝ կախված երկրից։